

• քթա եւ կէս ըստ մարդաթուի, զաւուրս հնգետասան, որ է հրամայեալ շափն զօրականին. սակայն էր որոց յիշատակեալ շափոդ ողջ հասանէր, եւ էր որոց նիւրպ: Զշինականսն փութով վարեցին ի կետադրեալն, զի էին նոցա սայլք եւ զրաստք, որք բացի հացէ այլով խիք ոչ ծանրանային պետութեան. իսկ քաղաքացեաց հարկ եղի անագանել անդէն շատ կամ սակաւ, մինչեւ գտանել սայլս եւ շարժել զբանակն զայն. քանզի բաղմութեան սայլից պէտք էին ոչ վասն ամբոխին եւեթ, այլ եւ վասն ախից զօրականին եւ անօթոց պատերազմի, եւ բազմամթեր աւարացն, որ յանկած է պատերազմաց:

Հարկ ի վերայ հասեալ էր եւ ինձ աւուր աւուր ելանել շրջել զժողովըրդեամբն, եւ մերթ զիշերել ընդ նոսա ըստ ազգի ազգի պիտոյից հիւանդաց կամ վշտացելոց, զի յայնչափ բազմութեան իբրեւ երեքհարիւր տանց բաշխելոց ի բազում գունդս խառնեալս ընդ հայոց յայտ ուրեմն է թէ ոչ պակասէին բազմադիմի արարք կթուցիչք ոզուց: Թող եւ զբազմակոչ աղաղակ աղքատաց հայոց, որք նեղեալ ի ծանր կարօտութենէ խմբովին պատէին զերիվարաւ եւ անիծակոտ լինէին Առաջնորդի իւրեանց. զորս միխթարական բանիւք պարտ էր սփոփել եւ քաջալերել: Ի կարգի բանիս յաճախութիւն առաջնոյ դիմի մի ի սնապարծութիւն ինչ գերեսցի, զի կարգ պատմութեանս այսպէս բերէ, ստուգածել զթել խօսիցս:

Ոյք ձեռնհաս էին՝ վարձեցին սայլս եւ ուղղեցան յԱխլձիսա, յայսպէս եւ կարսեցիք ի նմին ժամանակի դատարկեցին զքաղաք եւ զգիւղօրէս իւրեանց եւ անցին ի Շիրակ գաւառ եւ ի Փամպակ. եւ զկարսեցիս առ սակաւ սակաւ արքունի ծախք ամբարձեալ ի սայլս անցոյց ի Կիւմրի աւան: Քանզի առ անագանել գործոյ շուտն եւ ի հասանել ժամանակեալ պահուն յանձն առել օսմանցոյն զԿարս, ոչ եւս մարթ էր ընդ Արտահան եւ ընդ Զրլուր յուղարկել զժողովուրդն, զի եւ Արտահան մասն է Օսմանցոյն: Պատուէր ետ Բանգրատիէ փոխել նոցա ի Կիւմրի ի սահման ոռւսաց հեծելոյ միօրեայ ճանապարհ ի Կարսայ. ուստի տակաւ թէպէտ ընդ երկայն ճանապարհ գնացեն ի տեղի իւրեանց. եւ ի հինգ յուլիսի աւանդեցին օսմանցոյն եւ զԿարս, թողեալ անդր զվերոյիշեալ Վօյնիկով մինչեւ ի հունձս ցորենոյ կարսեցույ, ըստ պայմանի եղելոյ:

Կիւմրի աւան յարեւմտեան ծայրի կայ Շիրակայ, առ ափամբք Ախուրեան գետոյ, այն է Արփա շայ, իբրու կէս ժամաւ հեռի ի քրոյն ի բարձու տեղի, եւ առաջի տեղի պահպանութեան ոռւսաց: Զգետովն բանակեցաւ ժողովուրդն. եւ մինչդեռ անդ էր Բանգրատիէ հրաման ընկալեալ ի նմանէ, մեկնեցի զուղափառ ժողովուրդ մեր յայլ ամենայն խմբից, որոյն ուֆֆիշեալ սահմանեալ նոցա, եւ զբանակտեղն զատուցեալ, որպէսզի դիւրագոյն յաջողեցցի միախումբ յղել զնոսա զճանապարհ իւրեանց:

Կարսայ բնակիչք տունք իբր վեցհարիւր, թող զշինականս, ոչ միահամուռ ի մի տեղի փոխեցան, այլ յերիս անջատան, զի մղտեսի Ակօ անուանեալքն, երկու եղբորորդիք մաքսապետք Կարսայ եւ յով ընչեղք յիւրեանս արկին զմասն մի տանել բնակեցուցանել ի Ղարաքիլիսէ աւան Փամբակուկանցի Մարտիրոս, որ ի գործ զինուորութեան ստացաւ հարստու հարստութիւն բազում ճգնի քաղաքացուցանել զԿիւմրի, եւ առ ի նոյն սակս որսացաւ զորս կարաց եւ յԱրղուումայ. երրորդ պառակտողն էր Զախալօղլու Ստեփան արքեպիսկոպոս քաղաքին, որ զիւրեան համախոհսն տարաւ բնակեցուցանել զկողիւք Արագածու յանբակ գիւղն Յառիճայ, ուր հոյակապ եկեղեցին է կանգնեալ ի Զաքարիայ սպասալարէ, եւ սակաւ վնասեալ կանգուն կայ ցայսօր. պնդելով թէ եւ համօրէն Շիրակ գաւառ եւ Փամպակ յիւր վիճակ հասանիցէ:

Իսկ որ ի Կիւմրի նստի Առաջնորդ Շիրակայ Մկրտիչ լոկ վարդապետ, ձեւանայ ասել, թէ նա նոր ժողովրդեան խնամ տարցէ եւ ինքն հնոյն. այլ որպէս թուի հնարի խարդաւանել զնա եւ լինքն կորզել զանչափ ժողովուրդ: Ըստ դմին օրինակի շինականք, որ ի բղեշխութենէ Կարսայ անցին այսր սփռեցան կէսք խմբովին եւ կէսք ցիրուցան ի մօտակայ գիւղօրէս մինչեւ